ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 10 — ՀՈԿՏԵՄԲԵՐ 1889

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԻՍԱԿԱՆ

Կը հրատարակուի ամեն ամսոյ սկիզբը:
Բաժանորդագին և կանխիկ վճարելի՝ Տարեկան 8 ֆր. = 4 դր.: — Վեցամսեայ՝ 5 ֆր. = 2 դր. 50 կոպ.:
Մէկ թիւ առանձին՝ կը վաճառուի 1 ֆր. = 50 կոպ.:

Խմբագրութեան կենդրոնավայրն է՝ Վիեննա, Մխիթարեան Միաբանութեան Մայր վանքը:
Ճամբոյր ժամքն խմբագրութեան վրայ է:
Ծանուցմունքն առանձին սակարկութեամբ:

ԲՈՎԱՆԴԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ — Հայ տպագրութեանց ամենահին երաբայրիքը (2 Պատկերաւ):
ԲԸՆԱՄԻՐԱԿԱՆ — Հետազօտութիւնք նախնեաց ուսկիօրէնին վրայ:
ՏԵՂԱԳՐԱԿԱՆ — Ժողովի վրան եւ շուրջը:
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ — Աշխան նովնը:
ԱՐՈՒԵՍՏԳԻՏԱԿԱՆ
ԱՌԵՏՐԱԿԱՆ — Զմիւռնիոյ 1888 տարւոյ մնտնսական դիրքը՝ պաշտօնական տեղեկագրէ քաղեալ: — Պաթումի 1888 տարւոյ առեւտրական վիճակը:
ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ — Բարիզի համաշխարհային Արուեստահանդէսը:
ԱՌԵՏՐԱԿԱՆ ՄԱՆՐԱՄՈՒՐՔ — Պայուի քարածէթի աղբերց ցամաքիլը: — Ռուսաստանի կոտաւի խարդախումը խափանելու գործածած հնարքը: — Ռիկայի արտածած հաւկիթը: — Ռուսաստանի արտածած հաւնէնը: — Այս տարուան հարաւային Ամերիկայի քամնակի հունձքը: — Ծովային մեռաքս:
ԲԱՐՈՅԱԿԱՆ
ԽՍԱՔ ՈՒ ԺԵՓԻՔ — Վերջին ժամանակներէ վէպ մը:
ԱՇԼԵՒԱՇԼԷ
ՆՈՐԱՄՈՒՐՔ — ՏՍՏԵՍԱԿԱՆ — ՄԱՆՐԱՄՈՒՐՔ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆՑ ԱՄԵՆԱՀԻՆ ԵՐԱԲԱՅՐԻՔԸ

Տարիներ անցան, եւ մենք այն միամիտ համոզման ու գիտութեան մէջ էինք, թէ առաջին անգամ Աբգար Թոխաթեցին քրանչան աշխատութեամբ վենետիկ քաղաքէն կ՚ընծայէ իւր ազգին Հայ տպագրութեան առաջին երաբայրիքը, կը տպէ Սաղմոսարան մը 1565ին։

Փրեդ. Միւլլէր, մեծ գիտնականն, արդէն շատ տարի յառաջ՝ գիտնալով Հայ ազգին մտաց ժրութիւնն ու գործունէութիւնը, եւ ճանչնալով անոր ձեռնարկութեան մեծ հոգին, տարակուսելով մը հարցուց առաջիկայ տողերը գրողին՝ թէ Առաջին Հայ տպագրութիւնն ստուգիւ 1565ի՞ն է։

Տարի մը յառաջ գրգռեց գիտնական աշխարհիս հետաքրքրութիւնը Հայ հին տպագրութեան մ՚ըստ պատմման երեւան ելլելը, որ Աբգարի սաղմոսէն հինգ տարի յառաջ, — ինչպէս Հայ պատրիարքնեան նոր երախայրէրը յօգուածոյն հեղինակը կը համարէր, — Լէմպերկի մէջ տպուած է։ Այս տպագրութիւնը (Տաղաբ) գտնուած էր Կերբա-Հայաքաղաքին Ս. Երրորդութեան եկեղեցւոյն մատենադարանին մէկ անկիւնը[1]։

Հիմայ մեր ձեռքն ունինք բոլորովին նոր եւ ստուգիւ ամենահին Հայ տպագրութիւն մը։ Այս գիրքս վերջին ատենները Վիեննայի Մխիթարեան Միաբանութիւնն ձեռք բերած է եւ կը պահուի Միաբանութեան մատենադարանը։

Այս հազուագիւտ եւ գիտնական աշխարհի բոլորովին անծանօթ գիրքը Պոլսոյ մէն է, ըստ բաւականի մաքուր տպագրուած, մեծատառ, որ ոչ Հայաքաղաքի վերոյիշեալ Տաղարանին, ոչ Վիեննայի Մխիթարեան մատենադարանին հնագոյն Հայ տպագրութեանց եւ ոչ ալ 1584ին Հռոմ տպուած Գրիգորեան տուփարին գրին կը նմանի։

Մատենին գիրքն՝ փոքրագիր ութածալ է, թուաղանակ չունի։ Թերթերը նշանակուած են ա, բ, գ, դ, ե, զ, է, ը տառերով, որոնք գրքին վերջին երեսին վրայ կարգաւ վերսին նշանա-

[1] Տես Հանդէս ամսօրեայ, 1888, թ. 8. էջ 138։